ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023 թվականի N 1148-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 272-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-495-Ն օրենքի 9-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին»:

2. Որոշման նախաբանը «2-րդ մասը» բառերից հետո լրացնել «, 9.1-ին հոդվածը» բառերով:

3. Որոշման 1-ին կետը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով՝

«3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը՝ համաձայն հավելված N 3-ի:»:

4. Որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

5. Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Որոշումը լրացնել N 3 հավելվածով՝ համաձայն N 3 հավելվածի:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

8. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել պետական կառավարման համակարգի մարմիններում և նրանց ենթակա մարմիններում պատասխանատու անձանց նշանակումը և սույն որոշմամբ սահմանված կարգով սույն որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը:

9. Առաջարկել անկախ և ինքնավար մարմինների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել անկախ և ինքնավար մարմիններում պատասխանատու անձանց նշանակումը և սույն որոշմամբ սահմանված կարգով սույն որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը:

10. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել համայնքներում պատասխանատու անձանց նշանակումը և սույն որոշմամբ սահմանված կարգով սույն որոշումից բխող անհրաժեշտ տեղեկատվության հրապարակումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ